ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2016 թվականի **թիվ 49** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու հետ կապված՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի ակտերի նախագծերի մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հավանություն տալ՝

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծին (կցվում է),

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս

կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու հետ կապված հարցերի մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կարգադրության նախագծին (կցվում է),

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծին (կցվում է):

Ներկայացնել ակտերի նշված նախագծերը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի քննարկմանը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի **թիվ** քաղ.

Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը եւ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 15.6 հոդվածի 1-ին կետին համապատասխան եւ ի գիտություն ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի տեղեկատվությունը Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ընթացքի վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը որոշեց.

1. Ճանաչել Համաձայնագիրը Եվրասիական տնտեսական միության համար պարտադիր այն ուժի մեջ մտնելու օրվանից:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի վերաբերյալ վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության հասցեով ուղարկել Համաձայնագրի 15.6 հոդվածի 1-ին կետով նախատեսված ծանուցումը.

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից Համաձայնագրի 15.6 հոդվածի 1-ին կետին համապատասխան նշված ծանուցումն ստանալու վերաբերյալ հաստատումն ստանալուց հետո տեղեկացնել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա վերաբերյալ:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« » -ի 20 թվականի **թիվ** քաղ.

Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու հետ կապված հարցերի մասին

Հաշվի առնելով «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016 թվականի թիվ որոշման ընդունումը՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) կառավարություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ՝

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս

կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 4.29 հոդվածի դրույթներն իրականացնելու նպատակով հավաստագրման եւ ստուգման էլեկտրոնային համակարգը մշակելիս, ինչպես նաեւ ապրանքների ծագման՝ Համաձայնագրի 4.31 հոդվածով նախատեսված արտագնա ստուգումներ անցկացնելիս ապահովել Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության հետ տեղեկատվական փոխգործակցության միասնական մոտեցումների կիրառումը.

ապահովել էլեկտրոնային տեղեկատվական փոխանակման պահանջների, կառուցվածքների, ձեւաչափերի եւ տեխնիկական պայմանների միասնականացումը Համաձայնագրի 5.7 հոդվածին համապատասխան էլեկտրոնային տեղեկատվության համախմբված փոխանակումը կանոնավոր իրականացնելու նպատակով՝ հաշվի առնելով Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգի օգտագործման նպատակահարմարությունը դրա կազմակերպման համար:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016 թվականի թիվ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի **թիվ** քաղ.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի։

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից։

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի 2016 թվականի
թիվ որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգում կատարվող

1. 133–րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12-րդ եւ 13-րդ ենթակետերով՝

«12) միջոցներ կիրառելու մասին որոշումների նախագծերը՝ «Միության մասին» պայմանագրի 50–րդ հոդվածին համապատասխան.

13) «Ազատ առեւտրի ռեժիմ սահմանելու մասին» երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրով նախատեսված սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը ժամանակավորապես կասեցնելու մասին որոշումների նախագծերը։»։

2. 142–րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 21-րդ եւ 22-րդ ենթակետերով՝

«21) միջոցներ կիրառելու մասին որոշումների նախագծերը՝ «Միության մասին» պայմանագրի 50–րդ հոդվածին համապատասխան.

22) «Ազատ առեւտրի ռեժիմ սահմանելու մասին» երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրով նախատեսված սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը ժամանակավորապես կասեցնելու մասին որոշումների նախագծերը։»։

3. Նշված Կանոնակարգի 1-ին հավելվածում՝

17-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«17. Միջոցների կիրառման եւ դրանց կիրառման կարգի մասին որոշումներ կայացնելը՝ «Միության մասին» պայմանագրի 50–րդ հոդվածին համապատասխան (բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29–ի համաձայնագրի 2.10 եւ 3.4 հոդվածներով նախատեսված միջոցների կիրառման մասին որոշումների ընդունման՝ հաշվի առնելով սույն հավելվածի 17^1 կետը)». լրացնել հետեւյալ բովանդակությամբ 17^1 կետով՝

«17^1. Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության հետ փոխհատուցում տրամադրելու մասին պայմանավորվածություններ ձեռք չբերելու կամ Կոլեգիայի կողմից նշված միջոցների կիրառման մասին որոշումներ չկայացնելու դեպքում «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29–ի համաձայնագրի 3.4 հոդվածով նախատեսված միջոցների կիրառման մասին որոշումներ չկայացնելը, ինչպես նաեւ նշված միջոցները երկարաձգելու, փոփոխելու եւ վերացնելու մասին որոշումներ կայացնելը, եթե դրանց կիրառման մասին որոշումները կայացվել են Խորհրդի կողմից՝ սույն կետին համապատասխան։»:.

լրացնել հետեւյալ բովանդակությամբ 133-րդ եւ 134-րդ կետերով՝

«133. «Ազատ առեւտրի ռեժիմ սահմանելու մասին» երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրով նախատեսված սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը ժամանակավորապես կասեցնելու, Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին որոշումներ կայացնելը, ինչպես նաեւ նշված միջոցը կիրառելու կարգը հաստատելը։

134. «Ազատ առեւտրի ռեժիմ սահմանելու մասին» երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրին համապատասխան՝ Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին տեղեկատվության կազմը, անդամ պետությունների կողմից այդ տեղեկատվությունը Հանձնաժողով ներկայացնելու կարգը հաստատելը։»։